

2018թ. դպրոցականների հանրապետական օլիմպիադայի խնդիրներ

"Աստղագիտություն" առարկայից

1. Նեպտունը, շարժվելով մոտավորապես շրջանագծային ուղեծրով, Արեգակի շուրջը պտտվում է  $T_1=165$  տարում, իսկ Պլուտոնը, շարժվելով էլիպտական ուղեծրով, որի պերիհելիում-Արեգակի հեռավորությունը մոտավորապես հավասար է Նեպտունի ուղեծրի շառավղին, մեկ պտույտը կատարում է  $T_2 = 248$  տարում: Հայտնի է, որ  $\tau_2 = 6.63$  տարվա ընթացքում Պլուտոնը ավելի մոտ է գտնվում Արեգակին, քան Նեպտունը: Գնահատել, թե որքա՞ն ու ժամանակում է Նեպտունը անցնում իր ուղեծրի այն հատվածը, որը կընկնի Պլուտոնի ուղեծրի ներսում, եթե համատեղենք այս մոլորակների ուղեծրերի հարթությունները: **3 միավոր**
2. Գնահատել այն մինիմալ  $v_0$  արագությունը, որը պետք է հաղորդել հրթիռին Երկրի վրա, որպեսզի այն ընկնի Արեգակի տրված կետի վրա: Արեգակի անկյունային շառավիղը ընդունել  $\alpha=4.65 \cdot 10^{-3}$  ռադիան, Երկրի ուղեծրային արագությունը՝  $V_0 = 29.8 \text{կմ/վ.}$ : Մասնավորապես, քննարկել այն դեպքերը, եթե ա) հրթիռի անկումը «շառավղային» է (այսինքն նրա ուղղագիծ ուղեծրի շարունակությունը անցնում է Արեգակի կենտրոնով), բ) հրթիռը ընկում է շոշափելով Արեգակի մակերևույթը: **5 միավոր**
3. Կրկնակի աստղը գտնվում է Արեգակից 10պկ հեռավորության վրա: Նրա բաղադրիչների աստղային մեծությունները հավասար են  $5^m$ , իսկ ջերմաստիճանները՝  $4000\text{K}$  և  $6000\text{K}$ . Նրանց շուրջը պտտվում է Յուպիտերի նման մոլորակ, որի ուղեծրի հարթությունը որոշակի անկյուն է կազմում մեր տեսագծի հետ: Ո՞ր աստղի սկավառակի վրայով անցնան ժամանակ առավել մեծ հավանականությամբ կարելի է հայտնաբերել մոլորակը, եթե աստղերի պայծառության չափման ձշտությունը կազմում է  $\omega / 0.^m005$ ,  $p / 0.^m001$ : **3 միավոր**
4.  $+62^\circ$  աշխարհագրական լայնության վրա նույն օրվա ընթացքում դիտվում Լուսնի երկու ծագում, տեղական ժամանակով 00ժ 00ր-ին և 23ժ 56ր-ին: Հնարավոր է արդյոք, որ հաջորդող մեկ ամսվա ընթացքում Երկրի որևէ վայրում դիտվեն արեգակնային կամ լուսնային խավարումներ: **5 միավոր**
5. Որոշել Արեգակի՝ լուսնային հանգույցից առավելագույն անկյունային հեռավորությունը, որի դեպքում կարող են դիտվել արեգակնային խավարումները: **4 միավոր**